

ՎԱՐԴՈՒՀԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ

ՕՖԵՐՏԱՅԻ ԵՎ ԱԿՑԵՊՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՅԵՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԴԵՊՋՈՒՄ

Սույն հոդվածն անդրադառնում է էլեկտրոնային ձևով օֆերտայի, ակցեպտի ուղարկման և ստացման ժամանակի, պայմանագրի կնքման պահի, ինչպես նաև օֆերտայի և ակցեպտի հետկանչի առանձնահատկություններին: Հեղինակի կարծիքով, օֆերտայի և ակցեպտի ստացման դեպքում հաղորդագրության ընթեռնելիության հարցը չպետք է քննարկման առարկա դարձվի: Հաշվի առնելով, որ էլեկտրոնային ձևով օֆերտայի և ակցեպտի ստացման ժամանակն ու, դրանով պայմանավորված, նաև պայմանագրի կնքման պահը տարբերվում են ավանդական թղթային ձևով պայմանագրի կնքման առանձնահատկություններից, հեղինակն առաջարկում է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Հոդվածում հեղինակը նաև անդրադառնում է օֆերտայի և ակցեպտի հետկանչի, ինչպես նաև էլեկտրոնային միջավայրում տարածված էլեկտրոնային սխալների խնդրին ու այդ կապակցությամբ կատարում առաջարկներ:

Հիմնարար բառեր՝ էլեկտրոնային օֆերտա, էլեկտրոնային ակցեպտ, էլեկտրոնային սխալներ, պայմանագրի կնքման պահ, օֆերտայի, ակցեպտի հետկանչ:

Փոստով փոխանցվող գրավոր ձևակերպված օֆերտայի և ակցեպտի դեպքում հստակ հնարավոր է փոստային կնիքով որոշել, թե երբ է օֆերտան կամ ակցեպտը ստացվել: Էլեկտրոնային միջոցներով նամակների փոխանցման դեպքում առաջանում է խնդիր, քանի որ համակարգը ցույց է տալիս միայն փաստաթղթի ուղարկված լինելու հանգամանքը, մինչդեռ դրանով չի հիմնավորվում, թե արդյոք այն ստացվել է, թե ոչ: Թեև ներկայումս մշակվել են մի շարք ծրագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում ապացուցել, թե արդյոք հաղորդագրությունը ստացվել և անգամ ընթերցվել է, թե ոչ¹, սակայն այդպիսի ծրագրերն առայժմ չեն տրամադրում հուսալիության բարձր մակարդակ: Օֆերտայի ստացման պահն ունի կարևոր նշանակություն, քանի որ օֆերտայում կարող է նշված լինել որոշակի ժամկետ, որի հաշվարկի սկիզբը կարող է պայմանավորված լինել դրա ստացմամբ:

ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն՝ 10-րդ հոդվածի առաջին կետում նշվում է, որ էլեկտրոնային հաղորդագրության ուղարկման ժամանակ է համարվում այն պահը, երբ այն դուրս է գալիս այն կազմողի կամ այն կողմի տեղեկատվական համակարգից, ով այն ուղարկել է կազմողի անունից, կամ եթե էլեկտրոնային հաղորդագրությունը դուրս չի եկել վերոհիշյալ անձանց տեղեկատվական համակարգից, ապա էլեկտրոնային հաղորդագրության

ստացման պահը: ՄԱԿՄԱԻՀ-ի «էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ եթե այլ համաձայնություն չի կայացվել ուղարկողի և ստացողի միջև, ապա հաղորդագրությունը համարվում է ուղարկված, երբ այն մտնում է տեղեկատվական համակարգ, որը դուրս է ուղարկողի վերահսկողությունից կամ այն անձի վերահսկողությունից, որը հաղորդագրությունը ուղարկել է ուղարկողի անունից: ՄԱԿ-ի կոնվենցիայում տրված ձևակերպումից հետևում է, որ պարտադիր չէ, որ հաղորդագրությունը դուրս գա տեղեկատվական համակարգից, ընդ որում՝ կոնվենցիայի մեկնաբանություններում այս նորմի առկայությունը բացատրվում է նրանով, որ հնարավոր է, որ կողմերն օգտվեն նույն ցանցային համակարգից, ուստի հաղորդագրություն ուղարկողը հնարավոր է, որ պահպանի վերահսկողությունը տվյալ համակարգի նկատմամբ²:

ՄԱԿ-ի կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային հաղորդագրության ստացման ժամանակ է համարվում այն պահը, երբ էլեկտրոնային հասցեի հասցեատիրոջ համար հնարավորություն է ստեղծվում դուրս բերել հաղորդագրությունը: Այն դեպքում, երբ հաղորդագրությունն ուղարկվել է հասցեատիրոջ այն հասցեին, որի մասին պայմանավորվածություն չի եղել, ապա ստացման ժամանակ է համարվում այն պահը, երբ

հաղորդագրությունը դուրս բերելու հնարավորություն է ստեղծվել, և հասցեատերը տեղյակ է դարձել, որ իրեն հաղորդագրություն է ուղարկվել հենց այդ հասցեով: Հասցեատիրոջ կողմից էլեկտրոնային հաղորդագրության դուրս բերման հնարավորություն ստեղծվում է այն պահին, երբ հաղորդագրությունը հասնում է վերջինիս էլեկտրոնային հասցեին: Ենթադրվում է, որ էլեկտրոնային հաղորդագրությունը դուրս բերելու հնարավորություն կստեղծվի այն պահին, երբ հաղորդագրությունը կմտնի ստացողի տեղեկատվական համակարգ³:

ՄԱԿ-ի մուշային օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե այլ համաձայնություն չի կայացվել ուղարկողի և ստացողի միջև, հաղորդագրության ստացման ժամանակը որոշվում է.

Եթե ստացողը նշել է տեղեկատվական համակարգ էլեկտրոնային հաղորդագրություններ ստանալու համար, ապա հաղորդագրությունը ստացվում է՝

ա. այն պահին, երբ հաղորդագրությունը մտնում է տվյալ տեղեկատվական համակարգ կամ

բ. եթե հաղորդագրությունն ուղարկվել է ստացողի այլ տեղեկատվական համակարգին այն պահին, երբ հաղորդագրությունը դուրս է բերվում ստացողի կողմից:

2. Եթե ստացողը չի նշել որևէ տեղեկատվական համակարգ հաղորդագրություններ ստանալու համար, ապա հաղորդագրությունն ստացվում է, երբ այն մտնում է ստացողի տեղեկատվական համակարգ:

Նմուշային օրենքի մեկնաբանությունների համաձայն՝ հաղորդագրությունը համարվում է չուղարկված, եթե այն հասել է հասցեատիրոջ տեղեկատվական համակարգ, սակայն մուտք չի գործել օրինակ՝ էլեկտրոնային փոստի հիշողության լցված լինելու պատճառով: Նման պարագայում օրենքը ելել է այն տրամաբանությունից, որ հասցեատերը չպետք է պարտականություն կրի իր տեղեկատվական համակարգը պահել ֆունկցիոնալ վիճակում⁴:

Այնպես է, որ թե՛ մուշային օրենքը, թե՛ ՄԱԿ-ի կոնվենցիան այս հարցը կարգավորելիս անդրադարձել են երկու հնարավոր իրադրությունների: Մասնավորապես, հաղորդագրություն ստացողը կարող է ունենալ մի շարք էլեկտրոնային հասցեներ, որոնց մի մասը կարող է օգտագործվել անձնական, մյուսները՝ գործնական նպատակներով: Կախված նպատակից՝ տարբեր է նաև այն հաճա-

խականությունը, որով հաղորդագրություն ստացողն ստուգում է իր էլեկտրոնային փոստը: Ուստի հաղորդագրությունն ստացողի իրավունքները պաշտպանելու նպատակով երկու իրավական փաստաթղթերով որդեգրվել է նմանատիպ մոտեցում, այն է՝ ստացողի կողմից էլեկտրոնային կոնկրետ տեսակի հաղորդագրություններ ստանալու համար տեղեկատվական համակարգ նշած կամ չնշած լինելու հանգամանքը: *Ավելին, երկու փաստաթղթերն էլ հաղորդագրության ստացումը պայմանավորել են միայն հաղորդագրության՝ ստացողի համակարգ մուտք գործելու հանգամանքով և ոչ դրա դուրս բերմամբ⁵, ինչը, կարծում ենք, արդարացված է, քանի որ փաստաթուղթը դուրս բերելու պահը դժվար է արձանագրել, և, բացի այդ, նման կերպ զերծ ենք մնում հասցեատիրոջ հնարավոր չարաշահումներից:*

Պետք է նկատել, որ թե՛ կոնվենցիան, թե՛ մուշային օրենքը հաղորդագրության ստացման հարցը կարգավորելիս որևէ կերպ չեն անդրադառնում այն խնդրին, որ հաղորդագրությունը կարող է ներկայացված լինել ստացողի համար անընթեռնելի տարբերակով, և որ այն ընթեռնելի դարձնելու համար ստացողից կարող են պահանջվել երկարատև և ծախսատար ջանքեր: Այս առնչությամբ տեսաբանները առաջ են քաշում մեկ այլ խնդիր ևս, այն է՝ ակցեպտը տրվել է այլ ձևով, քան նշված է օֆերտայում⁶:

Ի տարբերություն կոնվենցիոն կարգավորման՝ ԱՄՆ-ի «Էլեկտրոնային գործարքների մասին» միասնական օրենքի համաձայն՝ *էլեկտրոնային հաղորդագրությունը համարվում է ստացված, երբ այն մուտք է գործում հասցեատիրոջ կողմից նշված տեղեկատվական համակարգ, ընթեռնելի է և կարող է դուրս բերվել հասցեատիրոջ կողմից⁷*: Նմանատիպ կարգավորում է նախատեսում նաև ԱՄՆ-ի Համակարգչային գործարքների վերաբերյալ միասնական օրենքը (Uniform Computer Information Transactions Act)⁸:

Կարծում ենք, որ էլեկտրոնային հաղորդագրությունների ստացման պահը չպետք է պայմանավորել դրանց ընթեռնելիությամբ, քանի որ դա ոչ թե ձևական պահանջի պահպանում է, այլ բովանդակային: Այլ կերպ՝ թղթային փաստաթղթաշրջանառության պարագայում ևս հնարավոր են դեպքեր, երբ նամակը ստացվել է, սակայն անընթեռնելի է ձեռագրի, լեզվի չիմացության, թղթի վնասվա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ծության և այլ պատճառներով, սակայն դրանից որևէ կերպ չի հետևում, որ նամակը չի ստացվել, ուստի կարծում ենք, որ ընթեռնելիության հարցն առանձին կարգավորում է պահանջում, սակայն որևէ կերպ չի ներառվում էլեկտրոնային հաղորդագրության ստացման հասկացության ներքո: Ինչ վերաբերում է ակցեպտի ստացման ձևին, ապա կարծում ենք, որ այս կապակցությամբ մեր օրենսդրության պարագայում խնդիր չի ծագի, քանի որ ակցեպտը պարզապես չի բավարարի օֆերտայի պայմաններին, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի (այլ պայմաններով՝ ակցեպտ) ուժով չի համարվի ակցեպտ:

Թեև «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը տալիս է տեղեկատվական համակարգի հասկացությունը⁹, սակայն որևէ կերպ չի անդրադառնում էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկմանն ու ստացմանը: Կարծում ենք, որ ներկայումս էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության լայնածավալ իրականության պարագայում հարկ է կարգավորել այս բացը, այլապես բացակայում է նմանատիպ խնդիրների որևէ նորմատիվ կարգավորում: Այս առնչությամբ առաջարկում ենք «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն և լրացում, այն է՝ նախատեսել դրույթ էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկման և ստացման պահի և վայրի հետ կապված: Մասնավորապես՝ օրենքում ավելացնել 71-րդ հոդված՝ հետևյալ վերտառությամբ և բովանդակությամբ.

«Հոդված 71. Էլեկտրոնային փաստաթղթերի ստացման պահը

Էլեկտրոնային փաստաթուղթը համարվում է ստացված այն պահից, երբ

ա. այն մուտք է գործում կողմի մատնանշված տեղեկատվական համակարգ կամ

բ. այն հայտնաբերվել է հասցեատիրոջ կողմից, եթե ուղարկվել է նրա կողմից չմատնանշված տեղեկատվական համակարգին»:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ևս պետք է կատարել փոփոխություն և ամրագրել, որ էլեկտրոնային փաստաթղթերի ուղարկման և ստացման կապակցությամբ գործում է այլ կարգավորում: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասում «պայմանագիրը կնք-

ված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից» նախադասությունից հետո կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ.

«Էլեկտրոնային միջոցներով ուղարկված օֆերտայի և ակցեպտի ստացման առանձնահատկությունները կարգավորվում են օրենքով»:

Օֆերտայի և ակցեպտի հետ կապված հաջորդ խնդրահարույց հարցը դրանց հետևանքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից: Եթե օֆերտայի հետևանքի մասին ծանուցումն ստացվել է օֆերտան ստանալուց առաջ կամ դրա հետ միաժամանակ, ապա օֆերտան համարվում է չուղարկված: Նույն օրենսգրքի 452-րդ հոդվածի համաձայն՝ հասցեատիրոջ ստացած օֆերտան չի կարող հետ կանչվել դրա ակցեպտի համար օֆերտայում սահմանված ժամկետում, եթե այլ վերապահում չկա օֆերտայում, կամ չի բխում առաջարկի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է:

Նման իրավակարգավորումը ցույց է տալիս, որ օֆերտան ուժի մեջ է ակցեպտանտի կողմից ստանալու պահից, եթե դրա հետևանքն չի ստացվել մինչև օֆերտան ստանալը կամ դրանից առաջ: Ընդ որում, օֆերտան ստացվելուց հետո այն հետ կանչվել կարող է միայն այն պարագայում, երբ այդ մասին վերապահում է կատարվել հենց օֆերտայում: Էլեկտրոնային միջոցներով հաղորդագրություններ փոխանակելիս դժվար է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ օֆերտայի հետևանքն ստացվի մինչև օֆերտայի ստացումը կամ դրա հետ միաժամանակ, քանի որ էլեկտրոնային հաղորդագրությունները փոխանցելը կատարվում է վայրկյանների ընթացքում, ուստի օբյեկտիվորեն անհնար է դառնում օֆերտայի ու ակցեպտի հետևանքն ուղարկելը քաղաքացիաիրավական նման կարգավորման պարագայում: Ավելին, հաշվի առնելով, որ էլեկտրոնային պայմանագրերի գերակշիռ մեծամասնությունը կնքվում է էլեկտրոնային կայքերում տեղադրված հայտարարությունների հիման վրա կոնկրետ կոճակներ սեղմելու արդյունքում, կողմերը օֆերտայի և ակցեպտի վերաբերյալ հայտարարություններ չեն փոխանակում, հետևարար և դրանց հետևանքի վերապահում էլ չեն կատարում:

Հարկ է ընդգծել, որ եվրոպական մի շարք երկրներում արդեն իսկ անդրադարձ է կատարվել այս խնդրին և համապատասխան կարգավորում է նախատեսվել: Այսպես, ընդհանուր իրավունքի երկրների համար հիմնական կանոնը օֆերտան ցանկացած ժամանակ հետ կանչելն է մինչև ակցեպտի ստացումը¹⁰, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր օրենսդրության համաձայն՝ ակցեպտը կարող է արտահայտվել նաև որոշակի գործողությունների կատարմամբ, կարծում ենք, որ նման կանոնը մեզ մոտ կիրառելի չէ, քանի որ կարող է հանգեցնել ակցեպտանտի իրավունքների խախտման: Իտալական օրենսդրության համաձայն՝ էլեկտրոնային միջոցներով հաղորդակցվելու պարագայում սպառողների հետ կատարվող գործարքների համար նախատեսվել է տարբեր կարգավորում, այն է՝ սպառողը կարող է հետ կանչել իր օֆերտան կամ ակցեպտն այն ուղարկելու պահից տասն օրվա ընթացքում¹¹, այսինքն՝ նախատեսվել է որոշակի ժամկետ, որի ընթացքում երկու կողմերն էլ պետք է գիտակցեն, որ առկա է հավանականություն թե՛ օֆերտայի, թե՛ ակցեպտի հետկանչի: Նմանատիպ կարգավորում է նախատեսվել նաև ԵՄ դիրեկտիվով, որի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ սպառողն իրավունք ունենա 14 օրերի ընթացքում հրաժարվել գործարքից առանց որևէ տուգանքի կամ պատճառի նշման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա կարգավորման պարագայում էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերի համար օբյեկտիվորեն հնարավոր չէ ապահովել օֆերտայի և ակցեպտի հետկանչ, կարծում ենք, որ սույն հոդվածները պետք է ենթարկվեն որոշակի փոփոխության և հարմարեցվեն ներկայիս իրականությանը, առավել ևս, որ նման գործարքներում մի կողմում հաճախ հանդես է գալիս հասարակ սպառողը, որի իրավունքների արդյունավետ պաշտպանություն օրենսգրքով ներկայումս չի ապահովվում:

Ուստի առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ կետում ավելացնել պարբերություն, որով նախատեսել որոշակի «մտածելու ժամկետ» էլեկտրոնային միջոցով կատարվող օֆերտայի հետկանչի համար: Այդ ժամկետը պետք է լինի ողջամիտ, որպեսզի մյուս կողմի իրավունքների խախտում ևս թույլ չտրվի: Ավելին, նույն օրենսգրքի 452-րդ հոդվածում ևս պետք է

ավելացնել դրույթ՝ հետևյալ ձևակերպմամբ. «էլեկտրոնային միջոցներով ուղարկված օֆերտան կարող է հետ կանչվել սույն օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետում, եթե այլ վերապահում չկա օֆերտայում, կամ չի բխում առաջարկի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է»:

Ընդ որում, հետկանչի նույնական ժամկետ պետք է նախատեսել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 455-րդ՝ ժամկետում ակցեպտի համար: Թե՛ օֆերտայի, թե՛ ակցեպտի դեպքում «մտածելու ժամկետը» չի գործի, եթե կողմերը հստակ կամահայտնությամբ հրաժարվել են իրենց այդ իրավունքից:

Կարծում ենք, որ հետկանչի իրավունքի իրացվելի լինելը կհեշտացնի նաև համակարգչային ծրագրերով և ինտերնետով հաճախ կատարվող սխալների ուղղումը:

Օֆերտայի և ակցեպտի ուղարկման և ստացման պահին դրանց հետկանչին անդրադառնալը նպատակ էր հետապնդում նաև որոշակիացնել պայմանագրի կնքման պահը էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերի համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի՝ դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով: Նույն օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկված անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

Առաջին հայացքից ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքին ամրագրել է մայրցամաքային իրավունքի երկրներում տարածված ակցեպտի ստացման տեսությունը, սակայն ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են նաև հայտարարության տեսությանը բնորոշ հատկանիշներ: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օֆերտա ստացած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկելը (սպրանքներ բեռները, աշխատանքներ կատարելը, ծառայություններ մատուցելը, համապատասխան գումար վճարելը և այլն) համարվում է ակցեպտ, եթե այլ բան նախատեսված չէ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օրենքով, այլ իրավական ակտերով կամ նշված չէ օֆերտայում:

Էլեկտրոնային միջավայրում ակցեպտի տրման պահը կարող է տարբեր լինել: Էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակմամբ կնքվող պայմանագրերի դեպքում ակցեպտն ըստ էության տրվում է նույն այն ձևով, ինչպես թղթային փոստային հաղորդակցության պարագայում, այն է՝ կազմվում է տեքստը և ուղարկվում հասցեատիրոջը: Նույն կերպ է աշխատում մեխանիզմը նաև ակնթարթային հաղորդագրություններ ուղարկելիս¹²: Սակայն էլեկտրոնային միջավայրում տարածում են ստացել նաև այլ կերպ կնքվող պայմանագրերը: Մասնավորապես՝ առավել տարածված ու հայտնի են, այսպես կոչված, browse-wrap, shrink-wrap և click-wrap կոչվող պայմանագրերը: **Browse-wrap** են կոչվում այն պայմանագրերը, որոնց պայմանները տեղադրված են կայքում որպես հղում, և կայքից ցանկացած ծրագիր ներբեռնելիս բացվում է հղումը ու առաջարկվում է համաձայնել պայմաններին¹³: **Shrink-wrap** են կոչվում այն պայմանագրերը, երբ ներբեռնելուց հետո փորձ է արվում ծրագիրը տեղադրել համակարգչում և բացված պատուհանում առաջարկվում է ծանոթանալ և համաձայնել պայմանագրի պայմաններին¹⁴: **Click-wrap** են կոչվում այն պայմանագրերը, երբ մինչև ծրագիրը ներբեռնելը կամ կայքում որևէ այլ գործողություն կատարելը պահանջվում է սեղմել «ընդունում եմ» կամ «համաձայն եմ» կոճակը պայմաններին համաձայնելու համար¹⁵:

Հաշվի առնելով, որ նման պայմանագրերը լայն տարածում ունեն, իսկ հաճախ գնորդները չունեն համապատասխան գիտելիքներ՝ հասկանալու, թե որ պահից պայմանագիրը համարվեց կնքված, և, հետևաբար, որ պահից սկսած՝ իրենք պարտավոր են կատարել վճարում, կարծում ենք, որ նման պայմանագրերի դեպքում կայքերը պարտավոր են նախատեսել «կրկնակի հարցման» մեխանիզմը: Այդ մեխանիզմի դեպքում մինչև պայմանագիրը կնքված համարվելը կայքը պետք է մեկ պատուհանով կրկին հարցնի, թե արդյոք գնորդը համաձայն է պայմանագրի պայմաններին և գիտակցում է, որ «այո» կոճակը սեղմելուց հետո պայմանագիրը կհամարվի կնքված իր համապատասխան իրավական հետևանքներով: Հնարավոր է նախատեսել նաև կարգավորում, որ պայմանագիրը կնքված է համարվում ոչ թե կոճակը սեղմելու պահից, այլ կո-

ճակը սեղմելու արդյունքում որպես համապատասխան պայմանագրի կնքման հետևանք՝ էլեկտրոնային փոստին նամակ ստանալու պահից: Բացի այդ, եթե լինեն իրավիճակներ, երբ «հղում» կոճակը սեղմելիս առաջանան տեխնիկական թերություններ, և ակցեպտանտի համար որոշակի չիճի այն հարցը, թե ի վերջո կնքվեց պայմանագիր, թե՛ ոչ, ապա, մեր կարծիքով, նման պայմաններում պետք է դիտարկել, որ պայմանագիր չի կնքվել, քանի դեռ չկա հակառակը հիմնավորող ապացույց:

Ինչպես նշել ենք վերը, քանի որ ակցեպտները հաճախ կարող են տրված լինել սխալմամբ, պետք է նախատեսել ակցեպտանտի՝ որոշակի ողջամիտ ժամկետում պայմանագրից հրաժարվելու իրավունքը: Նման պարագայում հարց է ծագում, թե արդյոք էլեկտրոնային ձևով կնքված պայմանագիրը պետք է համարել կնքված ակցեպտի ստացման, թե ակցեպտից հրաժարման ժամկետի ավարտի պահից: Եթե ակցեպտի ստացման պահը համարվի պայմանագրի կնքման պահ, ապա կարող է հանգեցնել օֆերենտի կողմից իր պայմանագրային պարտավորությունների կատարման: Վերջինս կարող է ձեռնարկել մի շարք գործողություններ, որոնք կրիսեն պայմանագրի բնույթից, հնարավոր է՝ կրի ծախսեր, մինչդեռ ակցեպտանտը կարող է փոխել իր մտադրությունը և հրաժարվել իր ակցեպտից: Ուստի գտնում ենք, որ պետք է որպես ընդհանուր կանոն ներառել այն կարգավորումը, որ էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերի դեպքում պայմանագիրը կհամարվի կնքված ոչ թե ակցեպտի ստացման օրը, այլ ակցեպտից հրաժարվելու ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը: Մյուս կողմից էլ կողմերը հնարավոր է ցանկություն ունենան չսպասել ակցեպտից հրաժարվելու ժամկետի ավարտին և անմիջապես անցնել պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Ուստի պետք է նախատեսել հնարավորություն, որ ակցեպտանտի կողմից հստակ կամահայտնությամբ «մտածելու ժամկետից» հրաժարվելու դեպքում պայմանագիրը կհամարվի կնքված ակցեպտի ստացման օրը, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ:

Այս կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Էլեկտրոնային միջոցներով պայմանագիր

կնքելու դեպքում պայմանագիրը կնքված է համարվում ակցեպտից հրաժարվելու ժամկետի ավարտին հաջորդող օրը, բացառությամբ հետևյալ դեպքերի.

Ա. ակցեպտանտը հրաժարվել է ակցեպտից հրաժարվելու իր իրավունքից կամ

Բ. ակցեպտանտը ձեռնարկել է սույն օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ մասում նշված գործողություններից որևէ մեկը»:

¹ Տե՛ս <http://www.didtheyreadit.com>, <http://www.guidingtech.com/10886/track-if-your-email-was-opened-clicked-gmail-rightinbox/> (մուսը՝ 09.01.2015թ.)

² Տե՛ս United Nations Convention on the Use of Electronic Communications in International Contracts, էջ 60:

³ Տե՛ս United Nations Convention on the Use of Electronic Communications in International Contracts, էջ 62:

⁴ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment 1996 with additional article 5 bis as adopted in 1998, United Nations Publications, New York, 1999, էջ 55:

⁵ Տե՛ս Карев Я. А., Электронные документы и сообщения в коммерческом обороте: правовое регулирование, С. 104.

⁶ Տե՛ս Ewan McKendrick, Contract Law, Text, Cases and Materials, Fourth Edition, Oxford University Press, 2010, էջ 103:

⁷ Տե՛ս Карев Я. А., նշված աշխատությունը, էջ 104:

⁸ Տե՛ս Gerald Spindler, Fritjof Borner, E-commerce Law in Europe and the USA, Heidelberg, 2010, 690-691 էջեր:

⁹ Ընդ որում՝ ձևակերպումն ամբողջովին համընկնում է կոմպենցիոն ձևակերպման հետ: Տե՛ս «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված:

¹⁰ Տե՛ս Roger LeRoy Miller, Gaylord A. Jentz, Business Law Today, second edition, West Publishing Company, 1991, էջ 174: Տե՛ս նաև Elliot I. Klayman, John W. Bagby, Nan S. Ellis, Irwin's Business Law, concepts, analysis, perspectives, USA, 1994, էջ 238: Տե՛ս նաև Davidson, Knowles and Forsythe, Business Law, Principles and Cases in The Legal Environment, Fifth Edition, USA., էջ 217: Տե՛ս նաև Henry R. Cheeseman, Contemporary Business Law, Second Edition, USA, 1994, էջ 194: Տե՛ս նաև J. David Reitzel, Donald P. Lyden, Nathan J. Roberts, Gordon B. Severance, Contemporary Business Law, Principles and Cases, Fourth Edition, USA, 1990, էջ 162:

¹¹ Տե՛ս Gerald Spindler, Fritjof Borner, E-commerce Law in Europe and the USA, Heidelberg, էջ 320:

¹² Տե՛ս John Dickie "Internet and Electronic Commerce Law in the European Union, Oxford, North America, 1999, էջ 28:

¹³ Տե՛ս <http://www.austintechologylawblog.com/2010/03/articles/browsewrap-agreements/browsewrap-agreements-the-contract-you-never-see/> (մուսը՝ 09.01.2015թ.)

¹⁴ Տե՛ս <http://www.internationallawoffice.com/newsletters/Detail.aspx?g=5ad7e558-f84b-466c-ab24-111aacc0d8cb6> (մուսը՝ 09.01.2015թ.)

¹⁵ Տե՛ս http://www.internetlibrary.com/publications/cwahe_art.cfm (մուսը՝ 09.01.2015թ.)

Վարդուի Դանիելյան

Аспирант кафедры гражданского права юридического факультета Ереванского Государственного Университета

РЕЗЮМЕ

Некоторые вопросы связанные с офертой и акцептом в случае заключения договоров в электронной форме

Настоящая статья обсуждает особенности момента отправки и получения оферты и акцепта в электронной форме, момента заключения договора, а также особенности отзыва оферты и акцепта. По мнению автора, вопрос читаемости сообщения в связи с моментом получения оферты или акцепта не должен быть предметом обсуждения. С учетом того, что время получения оферты и акцепта в электронной форме и обусловленное с этим момент заключения договора различаются от особенностей заключения договора в традиционной бумажной форме, автор предлагает произвести соответствующие законодательные изменения. В статье автор касается также вопросов отзыва оферты и акцепта, проблемам электронных ошибок распространенным в электронной среде, и представляет в связи с этим некоторые предложения.

Ключевые слова: электронная оферта, электронный акцепт, отзыв, момент заключения договора, электронные ошибки.

Varduhi Danielyan

PhD student at the Chair of Civil Law in the Department of Law at Yerevan State University

SUMMARY

Offer and acceptance related issues in case of electronic agreements

This article touches the peculiarities of sending and receiving offers and acceptances in electronic form, as well as their cancellation and the moment of concluding agreements. The author is convinced that technical illegibility should not be a topic for discussion while considering the fact and date of sending and receiving offers or acceptances. Given the differences between the time of concluding agreements via electronic means and in traditional paper format, the author suggests to make legislative amendments. The author also discusses the problem of cancellation of offers and acceptances and the issue of electronic mistakes prevalent in electronic environment and makes relevant suggestions.

Keywords: electronic offer, electronic acceptance, cancellation, the moment of contract conclusion, electronic mistakes.